

Տեղեկագիր

Թիվ 9 (45)
Սեպտեմբեր 2009թ.

Newsletter

Issue 9 (45)
September 2009

Նշվեց ծնողների օրը

Այս տարի Ծնողների օրը ԱՌԿ-ում նշվեց սեպտեմբերի 30-ին: Ուսանողների ծնողների մեծ մասը առաջին անգամ էին այցելում ԱՌԿ: Թե նորեկները և թե ԱՌԿ-ում նախկինում եղած ծնողները ուրախությամբ նշեցին ԱՌԿ-ի ավանդական դարձած տոնը իրենց երեխաների հետ:

«Երկու տարի առաջ, երբ որդիս ընդունվեց Ագրարային համալսարան, ես դեռ այն ժամանակ նրան խորհուրդ տվեցի համալսարանում սովորելու առաջին իսկ տարվանից նախապատրաստվել Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն ընդունվելու համար, - ասաց կրտսեր կուրսի ուսանող Նարեկ Մուրադյանի մայրը, - Այժմ շատ գոհ եմ, որ նա հետևեց իմ խորհրդին»:

«Եղբորս տղան շատ լավ բաներ էր պատմել ԱՌԿ-ի մասին, - ասաց ավագ կուրսի ուսանող Հրանտ Հովհաննիսյանի հորեղբայրը, - Պատմել էր, որ ԱՌԿ-ի շրջանավարտները կյանքում գտնում են իրենց արժանի տեղը: Բայց, անկեղծ ասած, չէի պատկերացնում, թե մեր երեխաներն այստեղ որքան բարձր մակարդակի կրթություն են ստանում: Մեծապես շնորհակալ եմ դրա համար»:

Այս գնահատականները հնչեցին ԱՀԿՄԿ-ԱՌԿ-ի տնօրեն Վարդան Ուռուտյանի կողմից ԱՌԿ-ի մասին արված ներկայացումից, դասախոսների, այլ ծնողների և ուսանողների հետ շփումներից հետո:

Պարոն Ուռուտյանն այդ օրը մեկ այլ հաճելի պարտականություն էլ ուներ անելու. նա օգնության կարգով որպես կրթաթոշակ դրամական պարգևներ հանձնեց ավագ կուրսի բարձր առաջադիմություն ապահոված ուսանողներից երեքի ծնողներին՝ ուսման վարձերի վճարման հոգսերը թեթևացնելու նպատակով: Խրախուսանքի այս ձևն առաջին անգամն է կիրառվում ԱՌԿ-ում և, ինչպես պարոն Ուռուտյանը նշեց, դառնալու է ԱՌԿ-ի հերթական գեղեցիկ ավանդույթը:

Ուսանողները, հատկապես կրտսերները, մեծ հաճույքով իրենց ծնողներին ցուցադրեցին լսարաններն ու համակարգչային սրահը, ինչպես նաև արեցին բազմաթիվ լուսանկարներ՝ հիշարժան օրվա տարբեր դրվագներում:



Parents Day at ATC

The ATC celebrated the Parents' Day on September 30th this year. For most of the parents it was their first visit to the ATC. Both the newcomers and those who had been in the ATC before were happy to share the celebration with their children.

"Two years ago, when my son entered the Agrarian University, I advised him to prepare himself for entering the ATC after the first two years of study," said mother of junior Narek Muradyan, "I am now very pleased that he took my advice."

"My nephew had told me many good things about the ATC and had shared success stories of ATC graduates finding their worthy places in life", said the uncle of senior student Hrant Hovhannisyanyan, "However, I could not imagine the high level of education our children get here; thanks a lot for this." This was after the presentation made by the Director of ICARE/ATC Vardan Urutyanyan and after sharing information with the ATC instructors, students, and other parents.

Dr. Urutyanyan had another enjoyable assignment on that day: he handed monetary awards to the parents of three senior students with very high academic records as scholarships to help them pay the tuition fees. This was for the first time in the ATC, and, as Dr. Urutyanyan mentioned, it will become another good tradition of the ATC.

The students, especially juniors, were happy to show their parents the classrooms and the computer lab and take pictures to remember the memorable day.



ԱՌԿ՝ նպատակին հասնելու ապրանքանիշ

Լիլիթ Պետրոսյան, ԱՌԿ 3-րդ կուրս



Իմ ապրած ժամանակաշրջանը էապես տարբերվում է ծնողներիս ապրած ժամանակաշրջանից: Ես մեծացել եմ անկախ Չայաստանում, որը գնալով ավելի ու ավելի է ինտեգրվում աշխարհին՝ ներառյալ միջազգային կրթական միջավայրին, որի մի մասնիկն էլ ես կարող եմ լինել: Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը Չայաստանում բակալավրի աստիճան շնորհող և միջազգային չափանիշներով գործող հենց այն ուսումնական հաստատությունն է, որտեղ սովորելու համար ես երջանիկ եմ: Հետաքրքիր է, թե ԱՌԿ-ի դասախոսական կազմը քանի անգամ է դիմորդներից լսել հետևյալ նախադասությունը. «Ես ընդունվում եմ ԱՌԿ լավ մասնագետ դառնալու համար»: Եվ սա ճշմարտություն է: Ես տեղեկություն ունեմ Չայաստանի և Վրաստանի ագրոբիզնեսներում և այլ բնագավառներում աշխատող ԱՌԿ-ի շրջանավարտների մասին. նրանք իսկապես լավ մասնագետներ են:

Ես ինչ-որ տեղ կարդացել եմ, որ գիտելիք ստանալ նշանակում է ճիշտ վարվել կյանքի ցանկացած դրվագում: Կյանքի բոլոր դրվագները կատարյալ չեն կարող լինել, բայց ես համոզված եմ, որ ԱՌԿ-ում ստացած կրթությունն ինձ կօգնի ճիշտ որոշումներ կայացնել: Ես այժմ ինձ արտոնյալ եմ զգում, քանի որ սովորում եմ մի միջավայրում, որտեղ հայերից բացի ուսանողներ կան Վրաստանից, իսկ փոխանակման ծրագրերի միջոցով ամեն տարի ուսանողներ են գալիս նաև բազմաթիվ այլ երկրներից: Շատ տպավորիչ է միևնույն լսարանում լինել օտարերկրյա ուսանողների հետ, ծանոթանալ նրանց մշակույթին, ընկերանալ:

Մեզ մոտ դասավանդման լեզուն ներկայիս աշխարհի լեզուն է՝ անգլերենը: Ուսումնական պլանը, դասավանդման մեթոդներն ու մոտեցումները հար և նման են արևմտյան համալսարանների մեթոդներին և մոտեցումներին: Առարկաները դժվար են, բայց այդուհանդերձ հաճելի է սովորելը, քանի որ յուրաքանչյուր հանձնած ստուգողական աշխատանք կամ միջանկյալ քննություն քեզ տարբեր է դարձնում այն մարդկանցից, ովքեր չեն անցել կրթության այս եզակի հնարավորության բովոյով:

Ես հպարտ եմ, և ապագա ինձ պայծառ է թվում, քանի որ կարիերայիս առաջին կարևոր քայլն անում եմ հենց ԱՌԿ-ում:

ATC is a brand name of a career goal

By Lilit Petrosyan, ATC 3

When entering the Armenian State Agrarian University (ASAU) more than two years ago, I already had set a goal to later continue my education in an educational institution of international dimension. My time is different from my parents' time: I grew up in the independent Armenia, and my country is more and more integrating into the global world, including the global education environment that I can choose to become a part of. The Agribusiness Teaching Center is that wonderful undergraduate level international dimension educational institution here in Armenia that I was happy to enter this year.

I wonder how many times ATC instructors had to hear the same answer from all students taking entrance exams for the ATC: "I want to enter the ATC to become a good specialist." And this is true! I have made inquiries about the graduates of the ATC working in different agribusinesses and other fields in Armenia and Georgia – they *are* good specialists.

I have read somewhere that to get knowledge means to do the right thing in every situation of life. Life is not perfect in every situation, but I am sure the knowledge I get at the ATC will help me do the right thing in most of the situations. I feel now really privileged to study in an environment where, in addition to Armenians, there are students from Georgia, and more students from a number of other countries join us every year through study abroad and exchange programs. It is exciting to be with them in the same classroom, to learn about their cultures, and make friends with your peers coming from different cultures.

The language of instruction is the world's universal language of today's world – English. The curriculum, the teaching methods and approaches are those of the western universities. The courses are difficult and yet pleasant to learn, because each quiz and each midterm that you overcome makes you positively different, if you will, from other students who do not possess this unique education opportunity and takes you closer to your goal.

I am proud to have made this first important step in my future career that seems bright to me thanks to my decision about coming to the ATC.



Նամակ ԱՌԼԿ-ին Իլյա Գոգիչաիշվիլիից

ԱՌԼԿ-ի 2008թ. նոյեմբերի շրջանավարտ



Գամար ջոբա: Բարև ձեզ: Ինչպե՞ս են բոլորը: Ինչպե՞ս են գործերը: Հուսով եմ, ամեն ինչ կարգին է ձեզ մոտ: Ուզում եմ տեղյակ պահել ԱՌԼԿ-ի իմ ընտանիքին, թե որտեղ եմ հիմա և ինչով եմ զբաղված: Անցյալ տարվա նոյեմբերին ԱՌԼԿ-ն ավարտելուց հետո ես սկսեցի աշխատել Վրաստանի հեռահաղորդակցության ոլորտի խոշորագույն ընկերություններից մեկում՝ Յունայտեղ տելեկոմում, որպես գլխավոր ֆինանսիստ: Իհարկե այն ագրոբիզնես չէ, բայց բավական խոստումնալից ու կարևոր աշխատանք էր, որը ես չէի թողնի, եթե չմեկնեի Սիացյալ Նահանգներ ուսումնաշարունակելու:

Այժմ ես գյուղատնտեսական տնտեսագիտության գծով մագիստրատուրայի ուսանող եմ Տեխասի A&M համալսարանում: Բացի այդ, ընդգրկված եմ Տեխասի A&M-ի Բուշի կառավարման դպրոցի միջազգային հարցերով շրջանավարտների հավաստագրման ծրագրում: Վերջերս ընտրվել եմ Տեխասի A&M համալսարանի գյուղ. տնտեսագիտության դեպարտամենտի Սագիստրանտների միության նախագահ: Հուսով եմ, որ այս հակիրճ տեղեկությունը բավական է՝ իմ համեստ նվաճումների մասին պատկերացում կազմելու համար, քանի որ ձեզանից շատերը տեղյակ չեն այդ մասին:

Բոլորիդ շատ կարոտել եմ: Շատ հպարտ եմ, որ մաս եմ կազմում ԱՌԼԿ-ի մեծացող ընտանիքի: Ուզում եմ, որ ԱՌԼԿ-ի իմ դասախոսներն իմանան, որ ես երբեք չեմ հիասթափեցնի իրենց այստեղ՝ Տեխասի A&M համալսարանում, որը ԱՌԼԿ-ի հովանավոր համալսարանն է, իսկ այսօր դարձել է իմ և ԱՌԼԿ-ի մի շարք հայ ու վրացի շրջանավարտների հարազատ համալսարանը:

Ուղարկում եմ նաև մի քանի լուսանկարներ, որոնցից մեկն արվել է այստեղ՝ Տեխասում, իսկ մյուսները, հուսով եմ, գեղեցիկ հուշեր կարթնացնեն ԱՌԼԿ-ի իմ ընկերների սրտերում:

Լավագույն մաղթանքներս,
Իլիա Գոգիչաիշվիլի

A letter from Ilia Gogichaishvili to ATC

ATC Graduate of November 2008

Gamar joba! Barev dzez! Hello! How is everybody? How are things over there? Hope that everything is fine with all of you. I want to keep you updated so that my ATC family knows where I am now and what I am doing. After graduating the ATC in November 2008, I started working as a Chief Financial Specialist at the United Telecom, one of the biggest telecommunication companies in Georgia. It's not an agribusiness, but it was a challenging and important job, and I would not quit if I was not to go to the United States to continue my education.

I am now at graduate studies (MSc) in Agricultural Economics at Texas A&M. Along with my degree in Ag Econ, I am enrolled at Graduate Certificate Program in International Affairs at Bush School of Government at Texas A&M. I recently was elected the President of Graduate Students Association at the Department of Agricultural Economics at Texas A&M University. Hope this brief information is enough to make a story of my trivial achievements that most of you don't know.

I miss you all and I am proud of ever being a part of the ATC family. I want my ATC instructors know that I will never disappoint them here at Texas A&M, which is the benefactor university for the ATC and has now become home for me and a group of other Armenian and Georgian ATC graduates.

I would like also to share three photos of mine: one is here in Texas and the other two will hopefully waken some good memories among my ATC community.

Best regards,
Ilia Gogichaishvili



Ուսանողական քարտեր և այլ օգուտներ Ակբա կրեդիտ Ագրիկոլից

Բարուր Շահնազարյանը ուրբաթօրյա սեմինարի հրավիրյալ դասախոս էր

Վերջին հինգ տարիներին Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկը ճանաչվել է Հայաստանի լավագույն բանկը համաձայն մի շարք կարևոր չափորոշիչների: Ավելին, հայտնի Ֆորբս ամսագիրը հայկական այս բանկը դասել է աշխարհի այն 4 բանկերի շարքին, որոնք չեն տուժել համաշխարհային ֆինանսական ճգնաժամից: Սա լավ նորություն էր ԱՌԿ-ի այն ուսանողների համար, ովքեր հավաքվել էին 5-րդ լսարանում և մասնակցում էին սեպտեմբերի 11-ի սեմինարին:

Ուսանողները նաև հետաքրքրված էին ուսանողական վարկերով, բանկի վարկային համակարգի կառուցվածքով, ֆերմերային միություններին հատկացված գյուղատնտեսական վարկերով, և այլ հարցերով: Բայց Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկի ուսանողական քարտերը հատուկ ուշադրության արժանացան: Ուսանողները կարող են օգտագործել այս քարտերը մի շարք մթերային խանութներից մթերք գնելու համար, իսկ լավ առաջադիմության դեպքում նաև դրամական պարգևներ կստանան:



Ընդհանուր առմամբ հայկական բանկերը ԱՌԿ-ի շրջանավարտների համար գրավիչ ոլորտ են: Այս բանկը ԱՌԿ-ի համար ամենակարևոր գործընկերն է ուսումնաարտադրական պրակտիկայի առումով: Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկը 3-4 մասնաճյուղ ունի Հայաստանի բոլոր տասը մարզերում և Արցախում:

Student cards and other benefits from ACBA-Credit Agricole Bank

Bakur Shahnazaryan was the guest lecturer at the Friday Seminar

ACBA-Credit Agricole Bank has been five times recognized the best bank in Armenia during the last five years according to a number of important criteria. Moreover, the famous Forbes magazine named the Armenian ACBA-Credit Agricole Bank among the only four banks worldwide that are not impacted by the global financial crisis. This was a good news for the ATC students gathered in room 5 for a regular Friday Seminar on September 11.

The students were also much interested in what Mr. Shahnazaryan had to say about student loans, agricultural loans provided through farmer unions, the structure and the crediting strategy of the bank, and many other issues. But student cards recently released by ACBA-Credit Agricole Bank are of special interest. Students can use these cards to buy food from different food outlets, while being able to get bonuses in case of good academic performance.

Armenian banks in general are one of the most attractive fields of activity for ATC graduates. ACBA-Credit Agricole is also one of the most important internship partners for the ATC. This bank has at least 3-4 branches in each of the 10 marzes of Armenia and in Artsakh.

Ինչպե՞ս ազդեց ճգնաժամը Հայաստանի տնտեսության վրա

Տաթևիկ Չոհրաբյան, տնտեսագիտության դոկտոր, ֆինանսական վերլուծության դասախոս

Վերջերս հետևե՞լ եք հիմնական լրատվամիջոցների վերնագրերին: Ուրեմն նկատած կլինեք, որ «ճգնաժամ» եզրույթը շարունակում է շրջանառվել: Այդ թեմայով քննարկումները շարունակվում են, արդեն մշակված քաղաքականությունները վերանայվում, իսկ ճգնաժամի տևողության մասին կանխատեսումները դիմամիկ կերպով փոխվում` կախված օրվա իրադարձություններից: Թեև Բեն Բերնանկեն պնդում է, որ ճգնաժամի ազդեցությունը մեծապես նվազել է և ժամանակի ընթացքում կհաղթահարվի, այսուհանդերձ այն շարունակում է լուրջ խնդիրներ հարուցել, հատկապես զարգացող երկրներում:

Անցումային երկիր լինելով, Հայաստանը ոչ միայն կրեց ճգնաժամի ազդեցությունը, այլև զգում է դրա ավելի ու ավելի խորացումը, որը «խոստանում է» նույնիսկ հաղթահարելուց հետո էլ «սպիներ» թողնել իր հետևից: Սակայն ճգնաժամի հետևանքները տնտեսության տարբեր հատվածներում տարբեր են: Առավել խոցված հատվածներն են շինարարությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, հանքարդյունաբերությունը, զբոսաշրջությունը և գյուղատնտեսությունը:

Գյուղատնտեսությունը երկրի համար ռազմավարական նշանակություն ունի ոչ միայն անմիջական պարենային ապահովության առումով, այլև առավել կարևոր` աղքատության կրճատման, սննդի անվտանգության, ազգային անվտանգու-

What happened with the Armenian economy as a result of crisis?

By Tatevik Zohrabyan, PhD, Instructor of Financial Analysis, Researcher.

Followed the headline news on major outlets lately? Then you know the term “crisis” is still quite popular. The discussions about it continue, devised policies are reconsidered, and prognosis of its duration changes dynamically conditional on other events. Although Ben Bernanke claims the influence of crisis is greatly lessened and through time it will be overcome, it is still a major issue especially for developing countries.

Armenia, being an in-transition country, felt the impact of the crisis which is gradually deepening with the potential of leaving “scars” behind it. The extent of crisis impact, however, differs across the sectors. Among the hardest hit sectors are construction, IT, mining, tourism, and agriculture.

Agriculture is of strategic importance not only for immediate food sufficiency purposes, but also for more important issues such as poverty reduction, food security, national security, and strategic development of the adjacent sectors. Therefore, it is critical to understand the impact of crisis on agriculture in such details that will generate sound policies and programs.

To assess the impact of crisis on the agricultural sector in Armenia, FAO granted ICARE as the institution in Armenia to conduct surveys and analyze the conditions in Armenian agriculture. As part of the project, 55 interviews have been conducted in all

թյան և հարակից հատվածների ռազմավարական զարգացման տեսակետից: Հետևաբար կարևոր է հասկանալ ճգնաժամի ազդեցությունը գյուղատնտեսության ոլորտի վրա: Իսկ դա կարելի է անել մանրակրկիտ ուսումնասիրությունների հիման վրա պատշաճ քաղաքականություն և ծրագրեր մշակելու միջոցով:

Հայաստանի գյուղատնտեսության վրա ճգնաժամի ազդեցության զննահատման նպատակով, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցով ԱՀԿՄԿ հիմնադրամը ներկայումս համապատասխան ուսումնասիրություններ և վերլուծություններ է իրականացնում: Նախագծի շրջանակում անցկացվել է 55 հարցազրույց ագրոպարենային համալիրի մատակարարման ամբողջ շղթայում, ընդգրկելով 6 մարզեր և Երևան քաղաքը: Այս ուսումնասիրության համար ընտրվել է երեք հիմնական մթերք՝ ցորեն, խաղող և կաթ: Ուսումնասիրությունն ընդգրկում է ֆերմերից մինչև մանրածախ առևտրով զբաղվողների ամբողջ շղթան՝ նշված երեք մթերքների գծով: Բացի այդ, հարցազրույցներ են վարվել նաև բանկերի ներկայացուցիչների և պետական պաշտոնյաների հետ:

Գործընթացը շարունակվում է, բայց հարցումների արդյունքների նախնական վերլուծությունն արդեն ցույց է տալիս, որ ճգնաժամը Հայաստանի գյուղատնտեսությանը լուրջ հարված է հասցրել: Շղթայի վերևի մակարդակում (ֆերմերներ) իրադրությունը ամենավատթարն է: Բարձրացել են ներդրանքների (պարարտանյութեր, մեքենասարքավորումներ և այլն) գները, որն էլ իր հերթին հանգեցնում է գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի թանկացմանը: Այստեղից, տրամաբանորեն և հաշվի առնելով տնտեսագիտության հիմնարար սկզբունքները, վաճառքի գինը պետք է բարձրանա, որպեսզի ծածկի բարձրացված ինքնարժեքը: Մինչդեռ երկրում իրադրությունն այլ է. ֆերմերները նույնիսկ ստիպված են իջեցնել վաճառքի գները, որպեսզի կարողանան ինչ-որ կերպ վաճառել իրենց արտադրանքը: Սրա պատճառները երեքն են: Նախ, մեծապես կրճատվել են Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումները, որի պատճառով նվազել է սպառողների գնողունակությունը: Երկրորդ, արտահանման շուկան փաստացիորեն դատարկվել է, որի պատճառով գյուղմթերք վերամշակող ձեռնարկություններն անկարող են վաճառել իրենց արտադրանքը, հետևաբար նաև նվազել է վերջիններիս կողմից գյուղմթերքի պահանջարկը: Երրորդ, կառավարությունը հապաղում է գյուղացուն աջակցելու հարցում: Եղած ծրագրերը խիստ սահմանափակ են և հեռու արդյունավետ լինելուց: Մյուս կողմից, ծրագրերը մասնավոր ձեռնարկությունների համար էլ քաջալերիչ քիչ բան են բովանդակում: Այսպիսով, տուժում է ամբողջ շղթան:

Մյուս կողմից, ճգնաժամից առանձնապես չեն տուժել բանկերը: Փաստորեն բանկերը սողանցքներ գտան վարկերի տրամադրման պայմանների հարցում և սկսեցին փող (օգուտներ) ստանալ: Ամենամեծ սողանցքը վարկերի վերաբաժնավորումն է: Դրանի արժեզրկումից մեկ ամիս առաջ բանկերի մեծ մասը վարկեր էր տրամադրում ԱՄՆ դոլարով: Մեծ գումարներ վերցրած շատ վարկառուներ 2009թ. մարտի 3-ից հետո ստիպված էին բանկերին վերադարձնել մոտ 20 տոկոսով ավելի գումար, քան վերցրել էին: Այստեղից էլ երևում է, թե ով ինչ ազդեցություն է կրել ճգնաժամից:

Հաշվի առնելով վերոհիշյալ խնդիրներն ու մարտահրավերները, գյուղնախարարությունն ի վիճակի չի լինի շատ բան անելու, այն էլ այն պայմաններում, երբ պետությունից փաստացի ֆինանսավորումն առ այսօր եղել է նախատեսվածից 3 անգամ ավելի պակաս: Մինչդեռ գյուղատնտեսության հատվածը վերակենդանացնելու համար անհրաժեշտ է ֆինանսական և այլ աջակցություն ցուցաբերել ոլորտի դերակատարներին:



the parts of the agri-food supply chain in 6 regions and in the capital. The three major products selected for the study included wheat, grape, and milk. The focus of the study is the chain starting from farmers to retailers for the mentioned product groups. In addition, banks (bank representatives) and government officials have been interviewed. The process is still ongoing.

The preliminary analysis of the survey results indicate that agriculture in Armenia is hit very hard by the crisis. In the upper levels of the chain (farmers) situation is the worst. Input (such as fertilizer, machinery, etc.) prices increased which translates into higher production costs for farm products. Hence, logically and according to the fundamental principles of economics, output price need to increase to account for the higher production costs. However, that's not the case and farmers have to even lower the product price to be able to sell it in the market. The reason is threefold. First, the level of remittances to Armenia decreased greatly which weakened the purchasing power of consumers (i.e. decrease in local demand for goods). Second, the export markets also dried up and the processing firms became unable to sell the products. Therefore, the demand for agricultural products from farmers also declined. Third, government is lagging behind in supporting farmers. The existing programs are very limited and not well-tailored. However, the programs are not encouraging for private enterprises as well. Thus, the entire chain is negatively affected.

The banks, on the other hand, have not been affected much by the crisis. In fact, most banks found a loophole in credit provision terms and started gripping money/profit from it as well. The greatest loophole is the denomination of loans. Most banks a month before the dram depreciation provided loans only in USD. After the March 3rd, 2009, many borrowers who took big sums of loans now had to pay back to the banks nearly 20% higher amount than the initial loan. Furthermore, inability to pay the monthly payments on time resulted in huge fines on top of the artificially increased loan amount. This should provide a clear picture of who is affected and how.

Given all the above mentioned problems and challenges, ministry of agriculture is unable to do much, moreover there is the issue of current financing that it receives from the state budget. The actual spending (financing) has actually been (up to this point) nearly three times lower than projected. However, it is known that the key to revitalizing the agricultural sector which is essential for developing countries and in-transition countries is financial and other types of support to the players in the sector.



Supported by:



International Center for Agribusiness Research and Education
74 Teryan St., 0009 Yerevan, Armenia
Tel: (37410) 52-28-39, 56-96-70;
Fax: (37410) 56-62-21 E-mail: info@icare.am
www.icare.am/atc

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն . Երևան, Տերյան 74

